Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

658
f. 19

24 SEP 2010

Կազմեց Լ. ԲԱԼԱՊԵՅԱՆ

ՊԱՐԱՊՈՒՐԴԻ ՅԵՎ ԽՈՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՎՃԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Առաջաբան՝ բնկ. Վ. Խաչիկոսյանի ճախաբանով

658
F-19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅՐ ԱՅԲՈՒԼԿԱՐԱՆ

ԵՐԵՎԱՆ 1993

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

		էջերս
1	Առաջաբան	3
2	Գարապուրդի և խոտանքի վարձավճարման մասին	5
3	Գարապուրդի վարձավճարման կարգը արտադրության մեջ և տրանսպորտում	5
	ա). Գարապուրդի վարձավճարման կարգը	5
	բ). Խոտանքի վարձավճարման կարգը	10
	գ) Ցեղբափակման մասն	13
4	Գարապուրդի և խոտանքի հատուցման կարգը շինարարության վրա	14
5	Գարապուրդի և խոտանքի վարձավճարման կարգը պետական հիմնարկներում և ձեռնակությունների ու կազմակերպությունների կառավարման ապարատում	16
6	Գարապուրդի և հատուցման կարգը սեզոնային աշխատանքներում	16
7	Անձրևի պատճառով և այլ մթնոլորտային յերևույթների հետևանքով առաջացած գարապուրդի վարձավճար. կարգը	17
8	Գարապուրդի և խոտանքի հատուցման կարգը մասնավոր ձեռնարկություններում և տնտեսություններում	18
	Հավելվածներ՝	
9	ԽՍՀՄ (ԿԳԿ) և ԺԿԽ-ի 1931 թ. դեկտեմբերի 30-ի վորոշումը (հավելվ № 1)	21
10	ԽՍՀՄ ԿԳԿ և ԺԿԽ 1931 թ. դեկտ. 30-ի վորոշումը փոփոխելու և լրացնելու մասին (հավելվ. № 2)	24
11	ԽՍՀՄ Աշխատողկոմատի 1932 թ. փետրվարի 25-ի, վորոշումը (հավելվ № 3)	26
12	ԽՍՀՄ աշխատողկոմատի 1932 թ. ապրիլի 11-ի, վորոշում (հավելվ № 4)	31
13	ԽՍՀՄ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1930-ի դեկտեմբերի 23-ի, վորոշում (հավելվ № 5)	34
14	ԽՍՀՄ Աշխատողկոմատի, 1932 թ. հունվարի 28-ի, № 18 վորոշումը (հավելվ № 6)	36
15	ԽՍՀՄ Աշխատողկոմատի 1932 թ. հունիսի 1-ի № 97 վորոշումը	37

Կազմեց Լ. ԲԱԼԱԴՅԱՆ

658 ԱՎ
Բ-19

ԳԱՐԱՊՈՒՐԴԻ ՅԵՎ ԽՈՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՎՃԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

145
38

Աշխատողկոմ՝ ընկ. Վ. Խաչիկոզյանի նախաբանով

ՀՍՍՌ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՊՍՌ. ԲԻԲԼԻՈԹԵԿԱ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱԽ ՌՈՒՍԻԱՅԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 1933

Գեղարվեստական տպարան, Սրբագրեց՝ Ա. Հախվերդյան

Գլավլիտ. № 9813 Գտավ. № 3570. Տիրաժ 2000

Հանձնված է արտադրության 8 հոկտ. 1932 թ.
Ստորագրված է տպելու 22 դեկտեմբ. 1932 թ.

ԱՌԱՋԱԲԱՆ

ԽՍՀՄ Կենտգործկոմի, Ժողկոմխորհի և Աշխ-ժողկոմատի կողմից հրատարակված խոտանքի (брак) և պարապուրդի (простой) վարձավճարման կարգի մասին վորոշումները ունեն խոշորագույն նշանակություն ամբողջ ժողովրդական տնտեսության և մասնավորապես արդյունաբերության ու շինարարության համար այն իմաստով, վոր այն ճշտորեն կիրառելու դեպքում, արդյունաբերության մեջ պետք է նվազեն խոտանքն ու պարապուրդները, բարձրանա աշխատանքի արտադրողականությունն ու արտադրած պրոդուկցիայի վորակը և իջնի արտադրած ապրանքի ինքնարժեքը:

Բացի այդ՝ խոտանքի ու պարապուրդի վարձավճարման կարգի մասին յեղած վորոշումները հանդիսանում են աշխատանքի դիֆֆերենցիալ (տարբերական) վարձատրման սիստեմի ուղղակի արտահայտությունը: Պարապուրդի և խոտանքի վարձավճարման նոր կարգը ներկայացնում է իրենից, թե յուրաքանչյուր առանձին աշխատողի և թե ամբողջ ձեռնարկության շահերի նյութական շահադրդռվածության ցայտուն միացումը:

Այդ նոր կարգը հարկադրում է արտադրության մեջ աշխատող յուրաքանչյուր բանվորի ու ծառայողի վոչ միայն կանխել խոտանքի և պա-

բաղուրդի դեպքերը, այլև ակտիվորեն պայքարել այլ ցեխերում կամ ձեռնարկություններում առաջացող պարապուրդների և խոտանքի դեմ:

Ցուրաքանչյուր ձեռնարկության ղեկավար մարմին, կուս., պրոֆ աշխատող պետք է լրիվ չափով ողտագործի բանվորների շահագրգռվածության մոմենտը, ինչպես նաև մեր սոցիալիստական շինարարության մեջ ընդգրկվող նորանոր բանվորներին զգալ տա, որ նրանք ներկայումս հանդիսանալով յերկրի արդյունաբերության տերն ու տիրականը, պետք է պատասխանատու լինեն իրենց արտադրածի վորակական և քանակական ցուցանիշների համար և հետևողականորեն վերացնեն մինչև այժմ դեռ գոյություն ունեցող պարապուրդի ու խոտանքի միանգամայն անհանդուրժելի բարձր տոկոսը:

Նկատի ունենալով պարապուրդի և խոտանքի վարձավճարման նոր կարգի մասին հրատարակված վորոշումների կարևորությունը՝ Աշխժոկոմատը գտավ անհրաժեշտ ժողովրդականացնել այդ առթիվ հրատարակված որենքները, բանվորական լայն խավերին այդ որենքներին իրազեկ պահելու համար:

Աշխժողկոմ՝ Վ. ԽԱՉԻԿՈՂԼՅԱՆ

1932 թ. նոյեմբերի 15-ին
Յերևան

ՊԱՐԱՊՈՒՐԴԻ ՅԵՎ ԽՈՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՎՃԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

ԽՍՀՄ Կենտգործկոմի ու Ժողկոմխորհի և ԽՍՀՄ Աշխատանքի ժողկոմատի կողմից պարապուրդի և խոտանքի վարձավճարման վերաբերյալ հրատարակված վորոշումները՝ (տես հավելվածներ)—արտադրության մեջ և տրանսպորտում, շինարարության վրա և սեզոնային աշխատանքներում, հիմնարկներում և մասնավոր ձեռնարկություններում ու տնտեսություններում—սահմանում են պարապուրդի և խոտանքի վարձավճարման տարբեր կարգ:

Կարևոր և անհրաժեշտ խնդիր է տալ աշխատավորությանը այդ վորոշումների ու դեկրետների պարզ և մատչելի մեկնաբանությունը: Մեր նպատակն է այս բրոշյուրում լուծել այդ պատասխանատու խնդիրը:

I

ՊԱՐԱՊՈՒՐԴԻ ՅԵՎ ԽՈՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ—ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՅԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՒՄ

ա) Պարապուրդի վարձավճարման կարգը

Արտադրության մեջ և տրանսպորտում՝ աշխատողի մեղքով առաջացած պարապուրդը— չի վճարվում: Որենքի կողմից խնդրի այս, բավակա-

նի խիստ, լուծումը— պետք է համարել ճիշտ և տեղին՝ այնքան—որքան նա ընդգծում է բանվորի կամ ծառայողի պատասխանատվությունը—առաջացած պարապուրդի համար և, միևնույն ժամանակ, պայքարում է աշխատանքի դիսցիպլինայի ամրացման համար:

Սակայն՝ եթե արտադրության մեջ և տրանսպորտում պարապուրդը առաջանում է վոչ աշխատողի մեղքով՝ պարապուրդը հատուցվում է «համապատասխան վորակի աշխատողների աշխատանքի ժամանակավարձային վճարման տարիֆային դրույքի կեսի (50%—ի) չափով»: Նույն կարգով վարձատրվում են հիմնարկ—ձեռնարկությունների բանվորներն ու ծառայողները՝ հումույթի, և էլեկտրոէներգիայի բացակայության հետևանքով առաջացած պարապուրդի ժամանակ:

Վերոհիշյալից յերևում է, վոր բանվորներն ու ծառայողները պատասխանատու չեն համարվում նաև այն դեպքերի համար, յերբ պարապուրդը արտադրության մեջ և տրանսպորտում առաջացել է վոչ աշխատողի մեղքով, և յերբ աշխատողը նախատեսելով պարապուրդի անխուսափելիությունը՝ այդ մասին նախապես չի տեղեկացնում հիմնարկի կամ ձեռնարկության վարչության և, բացի այդ, իր կողմից ձեռք չի առնում միջոցները դալիք պարապուրդի պատճառները հայտաբերելու և պարապուրդը կանխելու համար:

Նոր սահմանված կարգը անշուշտ կհարկադրի հիմնարկ—ձեռնարկությունների վարչության և բանվորներին՝ պարապուրդները վերացնելու համար ձեռք առնել վճռական միջոցներ:

Սակայն, արտադրության մեջ և տրանսպորտում պարապուրդը վճարելու վերաբերյալ սահմանված ընդհանուր կարգից՝ բացառություն է ստեղծվում մետաղագործական, լեռնահանքային և կոկսի արդյունաբերության համար. վերջիններում՝ վոչ աշխատողի մեղքով առաջացած պարապուրդը վճարվում է ժամանակավարձային համապատասխան կարգի տարիֆային դրույքի, վոչ թե 50 %—ի, այլ յերկու յերրորդի չափով:

Տեքստիլ գործարանների նկատմամբ նույնպես իբրև ժամանակավոր միջոց, թույլատրվում է, վառելանյութի և էլեկտրոէներգիայի բացակայության հետևանքով առաջացած պարապուրդները վճարել ժամանակավարձային համապատասխան կարգի տարիֆային դրույքի յերկու յերրորդի չափով:

Պարապուրդը վճարելու վերաբերյալ սահմանված ընդհանուր կարգից բացառություն է ստեղծվում նաև նոր արտադրությունների համար, վարժվելու (դաղդյահների, մեքենաների, մոտորների, տրանսֆորմատորների, ջրանիվի մանրամասնությունները մշակելու) ժամանակաշրջանում. վոչ աշխատողի մեղքով առաջացած պարապուրդը, թե նոր սկսող և թե գործող ձեռնարկություններում՝ վճարվում է ժամանակավարձային համապատասխան կարգի տարիֆային դրույքի հաշվով: Նոր արտադրությունների նկատմամբ՝ այս բացառության սահմանելը բացատրվում է նրանով, վոր այնտեղ վարժվելու ժամանակաշրջանում հաճախ են տեղի ունենում անակնկալ և աշխատողների կամքից անկախ պատճառներով առաջացող պարապուրդներ և վոր այդպիսի արտադրությունն-

ռում տեղի ունեցող պարապուրդների կանխելը— անհամեմատ ավելի դժվար է։

Առաջացած պարապուրդի մասին աշխատողը պարտավոր է անմիջապես տեղեկացնել վարչության։ Աշխատողը պարտավոր է նույնպես իր ժամանակին նախազգուշացնել վարչության այն բոլոր հանգամանքների մասին, որոնք կարող են պարապուրդ առաջացնել։

Այս պարտավորությունները չկատարելու դեպքում՝ պարապուրդի համար չի վճարվում և աշխատողը, բացի այդ, յենթարկվում է տուժանքի համաձայն տույժացուցակի։

Վարչությունը իր կողմից պարտավոր է պարապուրդի հետևանքով ազատված աշխատողներին, պարապուրդի ամբողջ ժամանակաընթացքում, անմիջապես փոխադրել ուրիշ վորևե աշխատանքի։

Այս պարտավորությունը չկատարելու դեպքում՝ վարչությունը յենթարկվում է կարգապահական կամ քրեական պատասխանատվության. բացի այդ՝ վարչությունը պատասխանատու է համաձայն ԽՍՀՄ. Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1929 թ. հուլիսի 12-ի վորոշման նաև հիմնարկին կամ ձեռնարկության հասած նյութական վնասի համար։

Պարապուրդի հետևանքով ազատված բանվորներին և ծառայողներին անհրաժեշտ է ոգտագործել նախնառաջ նույն ձեռնարկության մեջ. սակայն, յեթե այդ անհնար է, և յեթե պարապուրդը տևում է յերկար (հինգ որից ավելի) ժամանակ, վարչությունը պարտավոր է ազատված աշխատողներին մեկ ամսից վոչ ավելի ժամանակով փոխադրել և ոգտագործել աշխատանքի նույն վայրում գտնվող վորևե այլ ձեռնարկության մեջ։

Սակայն, հիմնարկ-ձեռնարկությունների վարչությունները պետք է անշուշտ հաշվի առնեն այն եյական հանգամանքը, վոր պարապուրդի հետևանքով ազատված բանվորական ուժը ուրիշ վորևե ձեռնարկություն փոխադրելիս՝ անհրաժեշտ է ոգտագործել աշխատողի վորակին համապատասխան աշխատանքներում և վոր արդելվում է վորակյալ բանվորներին փոխադրել տնային սպասարկության, մատուցելու, հավաքելու և տեղափոխելու աշխատանքներում, բացի այն դեպքերից յերբ այդ աշխատանքի կատարումը անհրաժեշտ է ռազերային վորևե աղետի պատճառով։

Յեթե պարապուրդի հետևանքով՝ վորակյալ բանվորներին, վորոնք տարիֆադրվում են, սրկած հինգերորդ կարգից և ավելի բարձր, փոխադրում են ցածր կարգի վորևե ուրիշ աշխատանքի, նրանց վարձավճարումը պետք է կատարվի նախկին աշխատանքի միջին վաստակի չափով. սակայն այդ վարձատրությունը տրվում է պայմանով, վոր կատարվեն այն աշխատանքի նորմաները, վորի վրա ժամանակավորապես փոխադրված է աշխատողը։

Վերոհիշյալ աշխատանքի նորմաները չկատարելու դեպքում՝ ինչպես և ժամանակավարձային ձևով վարձատրվող աշխատանքի փոխադրելու դեպքում՝ այլ աշխատանքի փոխադրված բանվորը պահպանում է նախկին աշխատանքի համապատասխան կարգի ժամանակավարձային տարիֆային դրույքը։

Հինգերորդ կարգից ավելի ցածր տարիֆադրվող բանվորներին՝ ցածր կարգի վորևե ուրիշ

աշխատանքի փոխադրելու դեպքում—վճարումը կատարվում է ըստ վարած պաշտոնի:

Վճարումը կատարվում է ըստ վարած պաշտոնի նաև այն դեպքում՝ երբ պարապուրդի հետևանքով աղաղված բոլոր կարգի բանվորները փոխադրվում են ավելի բարձր կարգի վորևե ուրիշ աշխատանքի:

Ժամանակավորապես ուրիշ աշխատանքի փոխադրվելուց հրաժարվելու (անկախ բանվորի կարգից)—պարապուրդը չի վարձատրվում, իսկ փոխադրվելուց հրաժարվելը վորակվում է իբրև աշխատանքի դիսցիպլինայի խախտում: (Տես. հավելված՝ № 4):

բ) Խոտանքի վարձավճարման կարգը

Աշխատողի մեղքով առաջացած խոտանքը վճարելու ժամանակ՝ կիրառվում է հետևյալ կարգը՝

1. Եթե խոտանքը ճշտված և և արտադրած պրոդուկցիան միանգամայն անպետք.—խոտանքը բնավ չի վարձատրվում.

2. Եթե խոտանքը կրում է մասնակի բնույթ և արտադրված պրոդուկցիան իր վորակով չի բավարարում սահմանված պահանջներին,—խոտանքը վարձատրվում է նվազեցրած չափով. այդ դեպքում պրոդուկցիայի պիտանիության տոկոսը և վճարի ճիշտ չափը—սահմանվում է վարչության կողմից. սակայն վճարը չի կարող տվյալ աշխատողի տարիֆային դրույքի կեսից ավելի լինել:

Այդպիսով՝ պետությունը միանգամայն իրավացիորեն հրաժարվում է վարձատրել այնպիսի

խոտանքը, վորը առաջացել է աշխատողի մեղքով և վորը հետևանք է աշխատողի կողմից հանդեպ աշխատանքի ցուցաբերված՝ անփութության, անուշադրության և անտնորինության:

Վոչ աշխատողի մեղքով առաջացած խոտանքը վճարելու ժամանակ՝ կիրառվում է հետևյալ կարգը՝

1. Լրիվ խոտանքը հատուցվում է ժամանակավարձային՝ համապատասխան կարգի տարիֆային դրույքի յերկու յերրորդի չափով.

2. Մասնակի խոտանքը վճարվում է իջեցրած գնահատությամբ—պրոդուկցիայի պիտանիության աստճանի համեմատ. արտադրած պրոդուկցիայի պիտանիության տոկոսը և վճարի ճիշտ չափը սահմանվում է վարչության կողմից. սակայն՝ հիշյալ պրոդուկցիայի վճարը չի կարող ժամանակավարձային համապատասխան կարգի տարիֆային դրույքի յերկու յերրորդից պակաս լինել.

3. Սակայն՝ մշակվող մետաղի դեֆեկտի պատճառով առաջացած չինված ի խոտանքը (որինակ՝ մետաղի անհամապատասխանություն, մետաղի մեջ խեցին կամ ճեղքված հայտաբերելը) վճարվում է նորմալ գործավարձային գնահատությամբ՝ յեթե դեֆեկտը հայտաբերվել է նյութի մանրամասնությունները մշակելու և հավաքելու համար՝ մեկ բանվորական որից վոչ պակաս ժամանակ ծախսելուց հետո.

4. Նոր արտադրություններում վարժվելու ժամանակաշրջանում առաջացած խոտանքը—վճարվում է ժամանակավարձային համապատասխան

կարգի տարիֆային դրույքի հաշվով։ (Տես. հավելված № 4)։

Աշխատողը պարտավոր է անմիջապես տեղեկացնել վարչության այն բոլոր դեպքերի մասին, երբ իր կողմից պատրաստած պրոդուկցիան—հանդիսանում է խոտանք։

Եթե աշխատողը չի տեղեկացրել վարչության իր գործում ունեցած խոտանքի մասին կամ շարունակել է աշխատանքը՝ հակառակ վարչության այդ աշխատանքը դադարեցնելու վերաբերյալ կարգադրության—հետագա խոտանքը բնավ չի վարձատրվում և միևնույն ժամանակ փչացրած նյութի համար աշխատողի աշխատավարձից կատարվում է պահում։ Այդ պահումը կատարվում է փչացրած նյութի իսկական արժեքի չափով, սակայն աշխատողի ամսական տարիֆային դրույքի մեկ յերրորդից վոչ ավել։

Այս դեպքում անհրաժեշտ է կիրառել ԽՍՀՄ կենտգործկոմի և ժողկոմխորհի 1932 թ. հունիսի 12-ի, բանվորների և ծառայողների նյութական պատասխանատվության մասին հրատարակված վորոշումը («ԽՍՀՄ. Աշխժողկոմատի Տեղեկատու» «1929 թ. № 28–29 և 1931-ի № 18)։

Սակայն, յեթե վարչությունը արել է կարգադրություն աշխատանքը շարունակելու մասին, հետագա խոտանքը, վորը կատարվել է վոչ աշխատողի մեղքով՝—վճարվում է պիտանի չինված-քի հետ հավասար չափով. այդ դեպքում՝ խոտանք պատրաստելու հետ կապված ձեռնարկության հասցրած վնասի համար ամբողջ պատասխանատվությունը—կրում է վարչությունը։

Լինում են դեպքեր՝ յերբ վոչ աշխատողի արտադրած խոտանքը հայտարերվում է՝ չինված-քը՝ տեխնիկական վերահսկողության մարմինների կողմից ընդունելուց հետո, այդ դեպքում խոտանքը վարձատրվում է պիտանի չինված-քի. հետ հավասար չափով։ (Տես. հավելված № 4)։

դ) Յեզրափակման մաս

Հիմնարկ-ձեռնարկությունների վարչությունները պարտավոր են պարապուրդը և խոտանքը վերացնելու համար ամեն տեսակի անհրաժեշտ միջոցներ ձեռք առնել, իսկ պարապուրդի անխուսափելիության դեպքում՝ ազատված աշխատողներին պարտավոր են ոգտագործել ուրիշ աշխատանքներում։

Այս պարտավորությունները չկատարելու դեպքում՝ վարչությունը յենթարկվում է կարգապահական կամ քրեական պատասխանատվության և բացի այդ, ձեռնարկության հասցրած վնասների համար՝ նյութական պատասխանատվության, համաձայն ԽՍՀՄ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1929 թ. հունիսի 12-ի վորոշման (Տես. «ԽՍՀՄ Աշխժողկոմատի տեղեկատու» 1929 թ. № 28–29 և 1931 թ. № 18)։

Վերոհիշյալից յերևում է, վոր պարապուրդի և խոտանքի վարձավճարման նոր կարգը հիմնվում է աշխատանքի դիֆֆերենցիալ վճարման սիստեմի վրա. վերջինը հարկադրում է արտադրության մեջ և տրանսպորտում աշխատող յուրաքանչյուր բանվորի ու ծառայողի պայքարել պարապուրդի և խոտանքի դեպքերի դեմ, ձեռք առնել միջոցներ նման դեպքերը կանխելու և այդպիսով կրճատել արտադրության մեջ ու տրանսպորտում

տեղի ունեցող պարապուրդների ու խոտանքի բարձր տոկոսը՝ մաքսիմալ չափով։

II

ՊԱՐԱՊՈՒՐԴԻ ՅԵՎ ԽՈՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Շինարարական աշխատանքներում պարապուրդի և խոտանքի վարձավճարման խնդրում անհրաժեշտ է ամբողջովին կիրառել ԽՍՀՄ. Կենտգործկոմի ու Ժողկոմխորհի և ԽՍՀՄ Աշխժողկոմատի՝ արտադրության մեջ և տրանսպորտում պարապուրդի ու խոտանքի վարձավճարման կարգի մասին հրատարակված բոլոր որենքները ու վորոշումները (Տես. հավելվածներ՝ № № 1, 2, 3, 4)։

Այդ առթիվ՝ աշխատանքի մարմինների գծով տրվել են հատուկ հրահանգներ՝ (ԽՍՀՄ. Աշխժողկոմատի 1932 թ. հունիսի 2-ի, №362/022 և ԱՍՖԽՀ Աշխժողկոմատի 1932 թ. հունիսի 10-ի, № 24/165 պարզաբանումները)։

III

ՊԱՐԱՊՈՒՐԴԻ ՅԵՎ ԽՈՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ՅԵՎ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆՈՒՅՆՊԵՍ ՅԵՎ ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ՈՒ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՊԱՐԱՏՈՒՄ, ՎՈՐՏԵՂ ԱՆՑ Ե ԿԱՅՎԱԾ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՊԵՏ-ՁԱՓԱՎՈՐՈՒՄ

1. Գործավարձային վճարման հիմունքներով աշխատողների նկատմամբ

ա) Պետական հիմնարկների և ձեռնարկությունների, ինչպես և կոոպերատիվ ու հասարակական կազմակերպությունների կառավարման ապարատում աշխատողի մեղքով առաջացած խոտանքը—չի վճարվում։

Իսկ եթե խոտանքը առաջացել է վոչ աշխատողի մեղքով՝ այդպիսին վճարվում է իջեցրած գնահատություններով, պրոդուկցիայի պիտանիության աստիճանի համեմատ։ Պրոդուկցիայի պիտանիության տոկոսը և վճարման չափը վորոշվում է հիմնարկ-ձեռնարկների և կազմակերպությունների, ինչպես և կոոպերատիվ ու հասարա-

բ) Պետական հիմնարկների և ձեռնարկությունների վարչության կողմից։

Կական կազմակերպությունների կառավարման ապարատում՝ գործավարձային հիմունքներով աշխատող անձանց մեղքով առաջացած պարապուրդը—չի վարձատրվում։

Սակայն, եթե պարապուրդը առաջացել է վոչ աշխատողի մեղքով՝ այդպիսին վճարվում է գործավարձային դրույքի 50 % չափով։

2. Ժամանակավարձային-պրեմիալ վարձատրության հիմունքներով աշխատողների նկատմամբ

Պետական հիմնարկների և ձեռնարկությունների, ինչպես և կոոպերատիվ ու հասարակական կազմակերպությունների կառավարման ապարատում աշխատող անձանց արարքների համար, վորոնք բացասական կերպով են անդրադառնում աշխատանքի արտադրողականության, աշխատանքի վորակի և հանձնարարությունների կատարման ժամկետների վրա՝ վարչությունը իրավունք ունի այդ աշխատողներին զրկել պրեմիայից ամբողջովին՝, կամ մասնակի։

Վերոհիշյալից յերևում է, վոր պետական հիմնարկների և ձեռնարկությունների, ինչպես և կոոպերատիվ ու հասարակական կազմակերպությունների կառավարման ապարատում՝ պարապուրդի և խոտանքի վարձավճարման նոր կարգը կիրառվում է միայն գործավարձային հիմունքներով աշխատողների նկատմամբ:

Ինչ վերաբերվում է ժամանակավարձային—պրեմիալ վճարման հիմունքներով աշխատողներին՝ նրանց վրա պարապուրդի և խոտանքի վարձավճարման նոր կարգը չի տարածվում, այլ դրա փոխարեն, հիմնարկ-ձեռնարկներին իրավունք է վերապահվում աշխատողներին զրկել պրեմայից (ամբողջովին, կամ մասնակի), այն դեպքում յեթե նրանք կատարում են արարքներ, վորոնք անդրադառնում են աշխատանքի արտադրողականության, աշխատանքի վորակի և հանձնարարությունների կատարման ժամկետների վրա:

IV

ՊԱՐԱՊՈՒՐԴԻ ՎԱՐՁԱՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԵԶՈՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ

Սեզոնային աշխատանքներում՝ կազմակերպչական-արտադրական պատճառներով (նյութերի, գործիքների մատակարարման խափանման, մեքենաների կանգ առնելու և այլն) առաջացած պարապուրդը վարձատրվում է հետևյալ ձևով՝

1. յեթե պարապուրդը տեվել է 12 որից վոչ ավելի ժամանակ—տարիֆային դրույքով.

2. յեթե պարապուրդը տեվել է 12 որից ավելի ժամանակ—վճարի չափը վորոշվում է կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

Այն դեպքերում, յերբ աշխատանքը դադարեցվում է անձրևի կամ այլ մթնոլորտային յերևույթների պատճառով, աշխատավարձը պարապուրդի ժամանակամիջոցում վճարվում է կողմերի համաձայնությամբ սահմանված չափով: (Տես. հավելված № 5):

Այդպիսով՝ արտադրության և տրանսպորտի համեմատությամբ՝ սեզոնային աշխատանքներում՝ կազմակերպչական-արտադրական պատճառներով (վոչ աշխատողի մեղքով) առաջացած պարապուրդի վարձավճարումը կատարվում է աշխատողների համար՝ ավելի արտոնյալ պայմաններով: Սակայն սեզոնային աշխատանքներում՝ պարապուրդի հետևանքով ազատված աշխատողներին վարչությունը նույնպես պարտավոր է անմիջապես փոխադրել և ոգտագործել նույն վայրում գտնվող վորևե ուրիշ աշխատանքներում, հակառակ դեպքում միայն՝ պարապուրդը վարձատրվում է վերոհիշյալ կարգով:

V

ԱՆՁՐԵՎԻ ՊԱՏՃԱՌՈՎ ՅԵՎ ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՅԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ՊԱՐԱՊՈՒՐԴԻ ՎԱՐՁԱՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

Այն դեպքերում, յերբ աշխատանք կատարելն անկարելի յե՝ անձրևի կամ այլ մթնոլորտային յերևույթների պատճառով, աշխատավարձը պարապուրդի ժամանակամիջոցում վճարվում է մշտական աշխատողներին—տարիֆային դրույքով: (Տես. հավելված № 6):

145
38

Վերոհիշյալից յերևում է, վոր արտադրության և տրանսպորտի համեմատությամբ՝ անձրևի և այլ մթնոլորտային յերևույթների պատճառով առաջացած պարապուրդի վարձավճարումը կատարվում է ավելի բարձր չափով: Այդ բացատրվում է նրանով, վոր անձրևի կամ այլ մթնոլորտային յերևույթների պատճառով առաջացած պարապուրդը նախատեսելը կամ կանխելը, ինչպես այդ կարող են և պետք է անեն աշխատողները ու վարչությունը արտադրության մեջ և տրանսպորտում—անկարելի յե. պարզ է, վոր տվյալ դեպքում՝ անձրևի կամ այլ մթնոլորտային յերևույթների պատճառով առաջացած պարապուրդի համար աշխատողների պատասխանատվության աստիճանը՝ չեր կարող լինել այն չափ բարձր՝ ինչպես արտադրության մեջ և տրանսպորտում: Հետևապես՝ անձրևի կամ այլ մթնոլորտային յերևույթների պատճառով առաջացած պարապուրդի ընթացքում՝ աշխատողները ստանում են ավելի բարձր չափով հատուցում, քան արտադրության մեջ և տրանսպորտում, վոչ աշխատողի մեղքով—առաջացած պարապուրդի համար:

VI

ՊԱՐԱՊՈՒՐԴԻ ՅԵՎ ԽՈՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՄԱՍՆԱՎՈՐ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՅԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Մասնավոր, վորոնց թվում և կոնցեսսիոն, ձեռնարկություններում և տնտեսություններում առաջացած պարապուրդը վճարվում է հետևյալ ձևով՝

Վոչ աշխատողի մեղքով առաջացած պարապուրդի ժամանակաշրջանի աշխատավարձը վճարվում է՝

1. յեթե պարապուրդը տևել է անընդհատ յերեք որից վոչ ավելի ժամանակ—միջին աշխատավարձով.

2. յեթե պարապուրդը տևել է անընդհատ յերեք որից ավել ժամանակ—դրույքով, հաշված պարապուրդը սկսելու մոմենտից:

Աշխատողի մեղքով առաջացած պարապուրդը—չի վճարվում:

Պարապուրդի հետևանքով ազատված աշխատողները կարող են փոխադրվել իրենց վորակին համապատասխանող ուրիշ աշխատանքի—մեկ ամսից վոչ ավելի ժամանակով: Այդ դեպքում՝ փոխադրելու ամբողջ ժամանակի համար վճարումը կատարվում է —ըստ վարած աշխատանքի, բայց վոչ պակաս նախկին աշխատանքների փաստացի դատումից:

Խոտանքը, վորը առաջացել է վոչ աշխատողի մեղքով—վարձատրվում է պիտանի չինված-քների հետ հավասար չափով:

Աշխատողի մեղքով առաջացած խոտանքը—չի վարձատրվում:

Աշխատողի մեղքով առաջացած մասնակի խոտանքը (յերբ արտադրած պրոդուկցիան իր վորակով չի բավարարում սահմանված պահանջներին)—վարձատրվում է իջեցված չափով: Այդ դեպքում պրոդուկցիայի պիտանիության տոկոսը և վճարի չափը սահմանվում է վարչության կողմից, իսկ առաջացած վեճերը լուծվում են ԳԿՀ-ի կողմից:

Այդպիսով՝ մասնավոր սեկտորում՝ աշխատողի մեղքով առաջացած պարապուրդը և խոտանքը ևս չի վարձատրվում այդ նշանակում է, վոր ո-

րենդրությունը դանում է նույնպես անհանդուրժելի՝ աշխատանքի դիսցիպլինայի թուլացումը և դրա հետևանքով առաջացած պարապուրդն ու խոտանքը մասնավոր սեկտորում՝ այնքանվորքան այդ, վերջին հաշվով պիտի անդրադառնա պրոլետարական պետության ժողովրդական տնտեսության վերակառուցման և սոցիալիստական շինարարության գործի վրա։

Սակայն՝ վոչ աշխատողի մեղքով առաջացած պարապուրդն ու խոտանքը վարձատրվում է. արտադրության մեջ և տրանսպորտում վոչ աշխատոքի մեղքով առաջացած պարապուրդի և խոտանքի վճարման համեմատությամբ՝—ավելի բարձր և աշխատավորության համար ավելի նպաստավոր պայմաններով, նույնիսկ՝ վորոշ դեպքերում—միջին աշխատավարձով (անընդհատ յերեք որից վոչ ավել ժամանակ տեվող պարապուրդը)։

Ցեթե հաստատված է, վոր աշխատողը իր մեղքով փչացրել է վարձողի կողմից իրեն հանձնված նյութերը, այդ դեպքում՝ ժողովրդական դատարանի աշխատանքային նստաշրջանի վորոշմամբ՝ աշխատողը պարտավոր է վճարել հասցրած վնասը, սակայն՝ իր ամսական տարիֆային դրույքի մեկ քառորդից վոչ ավել։ Նյութերի արժեքը վորոշվում է—պետական մթերման գների համաձայն։

Գումարները, վորոնք պիտի գանձվեն աշխատողից աշխատանքային նստաշրջանի վորոշման համաձայն՝ կատարման թերթի հիման վրա պահվում են աշխատավարձից։ Պահումներ արձակման նպաստից, արձակուրդի փոխհատուցումից և այլ փոխհատուցման գումարներից—չի թույլատրվում։ (Տես. հավելում № 7)։

ՀԱՎԵԼՎԱԾ № 1

ԽՍՀՄ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ ՅԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

Արտադրության մեջ և տրանսպորտում պարապուրդի և խոտանքի վարձավճարումը կարգավորելու միջոցառումների մասին

[redacted] 1931 թ. դեկտեմբերի 30-ին [redacted]

ԽՍՀՄ Կենտրոնական Գործադիր Կոմիտեն և Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը վորոշում են՝

I.

1. Աշխատողի մեղքով առաջացած պարապուրդի դեպքում՝ աշխատավարձը չի վճարվում։

2. Վոչ աշխատողի մեղքով առաջացած պարապուրդի դեպքում՝ աշխատավարձը վճարվում է՝ համապատասխան վորակի աշխատողների ժամանակավարձային վճարման տարիֆային դրույքի կեսի չափով, բացի մետաղագործական, լեռնահանքային և կոկսի արդյունաբերությունից, վորտեղ վոչ աշխատողի մեղքով առաջացած պարապուրդը վճարվում է տարիֆային դրույքի $^2/_3$-ի չափով։

3. Պարապուրդի հետևանքով ազատված աշխատողները՝ պարապուրդի ժամանակաշրջանում՝

պետք է փոխադրվեն այլ աշխատանքի՝ նույն վայրում գտնվող՝ նույն, կամ վորևե ուրիշ՝ ձեռնարկության կամ հիմնարկի մեջ, պահպանելով նախկին աշխատանքի միջին աշխատավարձը (ԽՍՀՄ կենտրոնական Գործադիր Կոմիտեյի և Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի 1931 թ. հունիսի 3-ի վորոշման՝ 5-րդ հոդվ.—ԽՍՀՄ Ո.Ժ. 1931 թ. № 35, հատ. 257):

4. Աշխատողի մեղքով առաջացած խոտանքը —չի վարձատրվում:

5. Աշխատողի մեղքով առաջացած մասնակի խոտանքը (յեթե պրոդուկցիան իր վորակով չի բավարարում սահմանած պահանջներին) վճարվում է նվազեցրած չափով: Միևնույն ժամանակ՝ պրոդուկցիայի պիտանիության տոկոսը և վճարի չափը՝ մինչև աշխատողի տարիֆային դրույքի կեսը—սահմանվում է վարչության կողմից:

6. Յեթե խոտանքը առաջացել է վոչ աշխատողի մեղքով՝ այդ դեպքում պահպանվում է նրա տարիֆային դրույքի մինչև $^2/_3$-ը:

II

7. Այս վորոշումը չի տարածվում մասնավոր (վորոնց թվում և կոնցեսսիոն) ձեռնարկությունների և տնտեսությունների վրա:

Մասնավոր ձեռնարկությունների և տնտեսությունների նկատմամբ՝ այդ վորոշմամբ նախատեսված խնդիրները կարգավորում են արհեստակցական միությունների համամիութենական կենտրոնական Խորհրդի հետ համաձայնեցված՝ ԽՍՀՄ

Աշխատանքի Ժողովրդական Կոմիսարիատի կողմից հրատարակված առանձին կանոններով:

8. ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդին հանձնարարվում է մեկ ամսվա ժամկետում ԽՍՀՄ որենսդրության մեջ մտցնել այս վորոշումից բղխող փոփոխությունները:

9. Դաշնակից հանրապետությունների կառավարություններին հանձնարարվում է մեկ ամսվա ժամկետում այդ հանրապետությունների որենսդրությունը համաձայնեցնել այս վորոշման հետ:

ԽՍՀՄ կենտգործկոմի նախագահ՝ Մ. Կալինին.

ԽՍՀՄ Ժողկոմխորհի նախագահի տեղակալ՝ Վ. Կույբիշեվ.

ԽՍՀՄ կենտգործկոմի քարտուղար՝ Ա. Յենուկիձե.

Մոսկվա-Կրեմլ.

1931 թ. դեկտեմբերի 30-ին։

(Հրատ. «ԽՍՀՄ Որ. Ժող.» 1932 թ. № 2, հոդ. 11)։

ՀԱՎԵԼՎԱԾ № 2

ԽՍՀՄ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ ՅԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

ԽՍՀՄ Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի և Ժողովրդական Կոմիսարների խորհրդի 1931 թվի. դեկտեմբերի 30-ի, արտադրության մեջ և տրանսպորտում պարապուրդի և խոտանքի վարձավճարումը կարգավորելու միջոցառումների մասին՝ վորոշումը փոփոխելու և լրացնելու մասին:

1932 թ. մարտի 27-ին.

ԽՍՀՄ Կենտրոնական Գործադիր Կոմիտեն և Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը վորոշում են՝

1. *ԽՍՀՄ Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի և Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի 1931 թ. դեկտեմբերի 30-ի, արտադրության մեջ և տրանսպորտում պարապուրդի և խոտանքի վարձավճարումը կարգավորելու միջոցառումների մասին՝ վորոշման 6-րդ կետը (ԽՍՀՄ. Ո.Ժ. 1932 թ. № 2, հոդ. 11) շարադրել հետևյալ խմբագրությամբ՝.*

«6. Վոչ աշխատողի մեղքով առաջացած լրիվ խոտանքը վճարվում է տվյալ աշխատողի ժամանակավարձային վճարման տարիֆային դրույքի 2/3-ի չափով:

Ծանոթություն. Եթե չինված քի խոտանքը առաջացել է մշակվող մետաղի դեֆեկտի պատճառով (նյութի վորակի անհամապատասխանություն, խեցի կամ մետաղի ճեղքվածք), վոր հայտաբերվել է—նյութի մանրամասնությունները մշակելու կամ հավաքելու համար մեկ բանվորական որից վոչ պակաս ծախսելուց հետո, վճարվում է նորմալ դործավարձային գնահատությամբ»:

2. *Մատնանշված վորոշումը լրացնել հոդ. 6[1], հետևյալ բովանդակությամբ՝*

«6[1]. Նոր արտադրությունները վարժվելու ժամանակաշրջանում (դազդյահների, մեքենաների մոտորների, տրանսֆորմատորների, ջրանիվի և այլի մանրամասնությունների մշակում) վոչ աշխատողների մեղքով առաջացած պարապուրդը և խոտանքը, թե նոր և թե դործող ձեռնարկություններում վարձատրվում է տվյալ աշխատանքի ժամանակավարձային վճարման տարիֆային դրույքի հաշվով: Նոր արտադրությունների վարժվելու ժամկետները, յուրաքանչյուր ձեռնարկության համար՝, մինչև յերեք ամսվա սահմաններում, սահմանվում են համապատասխան տնտեսական միավորումների կողմից, համաձայնեցնելով արհեստակցական միության հետ:

ԽՍՀՄ Կենտգործկոմի նախագահ՝ Մ. Կալինին.

ԽՍՀՄ Ժողկոմխորհի նախագահի տեղակալ՝ Վ. Կույբիշեվ.

ԽՍՀՄ Կենտգործկոմի քարտուղար՝ Ա. Յենուկիձե:

1932 թ. փետրվարի 25-ին

(Հրատ. «ԽՍՀՄ Ող. Ժող» 1932 թ. № 21 հոդ. 144).

ՀԱՎԵԼՎԱԾ № 3

ԽՍՀՄ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ № 31 ՎՈՐՈՇՈՒՄԸ

Պարապուրդի և խոտանքի վարձավճարման կարգի մասին.

1932 թ. փետրվարի 25-ին

Համաձայն ԽՍՀՄ ԿԳԿ և ԺԿԽ 1931 թ. դեկտեմբերի 30-ի, արտադրության մեջ և տրանսպորտում պարապուրդի և խոտանքի վարձավճարումը կարգավորելու միջոցառումների մասին՝ վորոշման (ԽՍՀՄ Որենք. ժողով. 1932 թ., № 2 հոդ. 11), ԽՍՀՄ Աշխժողկոմատը վորոշում է՝

I. Պարապուրդի վարձավճարման կարգը

1. Աշխատողի մեղքով առաջացած պարապուրդի դեպքում՝ աշխատավարձ չի վճարվում:

2. Վոչ աշխատողի մեղքով առաջացած պարապուրդի դեպքում՝ աշխատավարձը վճարվում է՝ համապատասխան վորակի աշխատողների աշխատանքի ժամանակավարձային վճարման տարիֆային դրույքի կեսի չափով: Այս կարգով վճարվում են նաև հում նյութի, ելեկտրոեներգիայի և այլի բացակայության պատճառով առաջացած պարապուրդները:

Մեքենաշինական, լեռնա-հանքային և կոկսի արդյունաբերության մեջ՝ վոչ աշխատողի մեղքով առաջացած պարապուրդը վարձատրվում է՝ ժամանակավարձային՝ համապատասխան կարգի տարիֆային դրույքի յերկու յերրորդի չափով:

3. Առաջացած պարապուրդի մասին աշխատողը պարտավոր է անմիջապես տեղեկացնել վարչության: Աշխատողը պարտավոր է նույնպես իր ժամանակին նախազգուշացնել վարչության այն բոլոր (պատճառների) հանգամանքների մասին, վորոնք կարող են պարապուրդ առաջացնել:

Այս պարտավորությունները աշխատողի կողմից չկատարելու դեպքում՝ պարապուրդը չի վարձատրվում և աշխատողը յենթարկվում է տուժանքի համաձայն տուժացուցակի:

4. Պարապուրդի հետևանքով ազատված աշխատողները պարապուրդի ժամանակաշրջանում անմիջապես պետք է փոխադրվեն ուրիշ աշխատանքի նույն ձեռնարկության մեջ:

Յեթե պարապուրդը տեվում է յերկար (5 որից ավել) ժամանակ և աշխատողին անհնար է ոգտագործել նույն ձեռնարկության մեջ՝ նա պետք է փոխադրվի աշխատանքի նույն վայրում գտնվող՝ վորևե ուրիշ ձեռնարկություն, մեկ ամսից վոչ ավելի ժամանակով:

Արգելվում է վորակյալ բանվորներին փոխադրել ոժանդակ և տնային սպասարկման աշխատանքների:

5. Պարապուրդի հետևանքով՝ ցածր կարգի վորևե ուրիշ աշխատանքի փոխադրելու դեպքում՝ վճարումը կատարվում է նախկին աշխատանքի միջին դատումով, պայմանով՝ վոր կատարվեն աշխատանքի համար սահմանված նորմաները, վորի վրա ժամանակավորապես փոխադրվում է աշխատողը: Նորմաները չկատարելու դեպքում՝ փոխադրվածի նկատմամբ պահպանվում է նախկին աշխատանքի իրեն կարգի ժամանակավարձային տարիֆային դրույքը:

Բարձր կարգի աշխատանքի փոխադրելու դեպ-

քում՝ աշխատողը վարձատրվում է —ըստ վարած պաշտոնի:

II. Խոտանցի վարձավճարման կարգը

6. Եթե խոտանքը առաջացել է աշխատողի մեղքով, կիրառվում է հետևյալ կարգը՝

ա) եթե խոտանքը անվիճելի է (պրոդուկցիան միանգամայն անպետք լինելու դեպքում)—խոտանքը չի վարձատրվում:

բ) Մասնակի խոտանքի դեպքում (եթե պրոդուկցիան իր վորակով չի բավարարում սահմանված պահանջներին) խոտանքը վճարվում է նվազեցրած չափով. պրոդուկցիայի պիտանիության տոկոսը և վճարելիքի ճիշտ չափը սահմանվում է վարչության կողմից. վարձավճարը չի կարող տվյալ աշխատողի տարիֆային դրույքի կեսից ավել լինել:

7. Եթե խոտանքը առաջացել է վոչ աշխատողի մեղքով՝ կիրառվում է հետևյալ կարգը՝

ա) եթե խոտանքը անվիճելի է—վճարվում է տվյալ աշխատողի տարիֆային դրույքի կեսի չափով:

բ) մասնակի խոտանքի դեպքում՝—խոտանք պատրաստելու համար վճարումը կատարվում է նվազեցրած չափով. պրոդուկցիայի պիտանիության տոկոսը և վճարի ճիշտ չափը սահմանվում է վարչության կողմից. այդ վճարը չի կարող տարիֆային դրույքի յերկու յերրորդից ավելի լինել:

8. Աշխատողի մեղքով առաջացած նյութերի փչացման համար՝, նրա աշխատավարձից կատարվում է հանուրդ՝ փչացած նյութի իսկական արժեքի չափով, սակայն, նրա ամսական տարիֆային դրույքի մեկ յերրորդից վոչ ավելի:

Այս դեպքում կիրառվում է ԽՍՀՄ ԿԳԿ և ԺԿԽ 1929 թ. հունիսի 12-ի, բանվորների և ծառայողների նյութական պատասխանատվության մասին վորոշումը («ԽՍՀՄ Աշխժողկոմատի Տեղեկատու» 1929 թ. № 28–29, 1931 թ. № 18):

9. Աշխատողը պարտավոր է անմիջապես հայտնել վարչության այն բոլոր դեպքերի մասին՝ յերբ նա կնկատի, վոր իր կողմից պատրաստած պրոդուկցիան—խոտանք է հանդիսանում:

Եթե աշխատողը այդ մասին չի հայտնել վարչության կամ շարունակել է աշխատանքը հակառակ՝ այդ աշխատանքը դադարեցնելու վերաբերյալ վարչության կարգադրության՝—հետագա խոտանքը բնավ չի վարձատրվում և փչացրած նյութի համար կատարվում է հանուրդ:

Սակայն, յեթե վարչությունը արել է կարգադրություն աշխատանքը շարունակելու մասին, հետագա խոտանքը, վորը կատարվել է վոչ աշխատողի մեղքով՝—վարձատրվում է պիտանի չինված քների հետ հավասար. խոտանք պատրաստելու հետ կապված՝ ձեռնարկության հասցրված վնասի պատասխանատվությունը—կրում է վարչությունը:

III. Յեզրափակիչ մաս

10. Աշխատողի մեղքով՝ այս վորոշման մեջ՝—հասկացվում է՝ աշխատողի կողմից աշխատանքի վերաբերյալ տված ցուցմունքների չկատարելը, անփութություն աշխատանքի մեջ, անտնորինու-

թյուն և ներքին կարգապահական կանոնների այլ խախտումներ:

11. Վարչությունը պարտավոր է պարապուրդը և խոտանքը վերացնելու համար ձեռք առնել բոլոր անհրաժեշտ միջոցները՝, իսկ պարապուրդի անխուսափելիության դեպքում՝ ազատված աշխատողներին ուրիշ աշխատանքներում ոգտագործել:

Պարտավորությունները չկատարելու դեպքում վարչությունը յենթարկվում է կարգապահական կամ քրեական պատասխանատվության և, բացի այդ, ձեռնարկության հասցրած վնասների համար՝ —նյութական պատասխանատվության, համաձայն ԽՍՀՄ ԿԳԿ և ԺԿԽ 1929 թ. հունիսի 12-ի վորոշման:

12. ԽՍՀՄ Աշխժողկոմատի 1930 թ. ապրիլի 10-ի՝ պարապուրդը և խոտանքը վարձատրելու կարգի մասին, № 148 վորոշումը («ԽՍՀՄ Աշխժողկոմատի Տեղեկատու» 1930 թ. №13»)—վերացվում է:

ԽՍՀՄ Աշխատանքի Ժողովրդական կոմիսար՝
Ցիխոն.

ԽՍՀՄ. Աշխժողկոմատի կոլլեգիայի անդամ՝
Դուբլեր:

(Հրատ. «ԽՍՀՄ Աշխժողկոմատի տեղեկատու 1932 թ. № 22—23).

ՀԱՎԵԼՎԱԾ № 4

ԽՍՀՄ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ № 62 ՎՈՐՈՇՈՒՄԸ

Պարապուրդը և խոտանքը վարձատրելու վերաբերյալ կանոնները փոփոխելու և լրացնելու մասին.

1932 թ. ապրիլի 11-ին.

Համաձայն ԽՍՀՄ ԿԳԿ և ԺԿԽ 1932 թ. դեկտեմբերի 27-ի վորոշման՝, ԽՍՀՄ. ԿԳԿ և ԺԿԽ 1931 թ. դեկտեմբերի 30-ի, արտադրության մեջ և տրանսպորտում պարապուրդի և խոտանքի վարձավճարումը կարգավորելու միջոցառումների մասին—վորոշումը փոփոխելու և լրացնելու մասին (ԽՍՀՄ Որենքն. Ժողով. 1932 թ. № 21 հոդ. 141), ԽՍՀՄ Աշխժողկոմատը վորոշում է՝

ԽՍՀՄ Աշխժողկոմատի 1932 թ. փետրվարի 25-ի, պարապուրդի և խոտանքի վարձավճարման կարգի մասին, № 31 վորոշման մեջ՝ մտցնել հետևյալ փոփոխությունները և լրացումները:

1. կետ 2-րդ. լրացնել 3-րդ մասով՝ հետևյալ բովանդակության՝.

«Նոր արտադրությունները՝ վարժվելու ժամանակաշրջանում (դաղդյահների, մեքենաների, ջրանիվի և այլ մանրամասնությունների մշակում), վոչ աշխատողի մեղքով առաջացած պարապուրդը, թե նոր և թե դործող ձեռնարկություններում վարձատրվում է՝ ժամանակավարձային համապատասխան կարգի տարիֆային դրույքի հաշվով նոր արտադրությունները վարժվելու ժամկետները, յուրաքանչյուր ձեռնարկության համար՝ մինչև

յերեք ամսվա սահմաններում, սահմանվում են համապատասխան տնտեսական միավորումի կողմից՝ համաձայնեցնելով արհմիության հետ»:

Պ. 4-րդ կետի վերջին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝.

«Արգելվում է վորակյալ բանվորներին փոխադրել տան (սպասարկման) աշխատանքների և մատուցելու, հավաքելու և տեղափոխելու աշխատանքների բացի այն դեպքերից, յերբ այդ աշխատանքների կատարումը հետևանք է տարերային աղետի»:

5. Պարապուրդի հետևանքով՝ վորակյալ բանվորներին, վորոնք տարիֆադրվում են՝ սկսած հինգերորդ կարգից և ավելի բարձր—ցածր կարգի վորևե ուրիշ, աշխատանքի փոխադրելու դեպքում՝ վարձավճարումը կատարվում է նախկին աշխատանքի միջին դատումով, պայմանով, վոր կատարվեն այն աշխատանքի նորմաները, վորի վրա աշխատողը փոխադրված է ժամանակավորապես: Այդ նորմաները չ'կատարելու դեպքում՝ նույնպես ժամանակավարձային ձևով վարձատրվող աշխատանքի փոխադրելու դեպքում՝ փոխադրվածի նկատմամբ պահպանվում է նախկին աշխատանքի իրեն կարգի ժամանակավարձային տարիֆային դրույքը:

Հինգերորդ կարգից ցածր տարիֆադրվող բանվորներին՝ ցածր կարգի վորևե ուրիշ աշխատանքի փոխադրելու դեպքում, նույնպես բոլոր կարգի բանվորներին՝ բարձր կարգի ուրիշ աշխատանքի փոխադրելու դեպքում՝ վճարումը կատարվում է ըստ վարած պաշտոնի:

Ուրիշ աշխատանքի փոխադրվելուց հրաժարվելու դեպքում (անկախ կարգից) պարապուրդը չի վարձատրվում, իսկ փոխադրվելուց հրաժարվելը վորակվում է իբրև աշխատանքի դիսցիպլինայի խախտում:

7. Յեթե խոտանքը առաջացել է վոչ աշխատողի մեղքով՝ կիրառվում է հետևյալ կարգը՝

ա) լրիվ խոտանքը վճարվում է ժամանակային՝ համապատասխան կարգի տարիֆային դրույքի յերկու յերրորդի չափով.

բ) մասնակի խոտանքը վճարվում է իջեցրած դնահատությունով, պրոդուկցիայի պլանիության տոկոսը և վճարի ճիշտ չափը սահմանվում է վարչության կողմից. դրա կապակցությամբ՝ չի կարող ժամանակավարձային համապատասխան կարգի տարիֆային դրույքի յերկու-յերրորդից պակաս լինել.

գ) Մշակվող մետաղի դեֆեկտի պատճառով առաջացած չինվածքի խոտանքը (նյութի վորակի անհամապատասխանություն, խեցին կամ մետաղի ճեղքված), վորը հայտարերվել է նյութի մանրամասնությունները մշակելու և հավաքելու համար՝ մեկ բանվորական որից վոչ պակաս ժամանակ ծախսելուց հետո—վարձատրվում է նորմալ դործավարձային դնահատությամբ:

դ) Նոր արտադրությունները վարժվելու ժամանակաշրջանում (հոդ. 2-ի յերրորդ մաս), խոտանքը վարձատրվում է ժամանակավարձային համապատասխան կարգի տարիֆային դրույքի հաշվով. 10 ստ. հ. IV հոդ. 9 լրացնել 4-րդ մասով հետևյալ բովանդակությամբ

«Վոչ աշխատողի մեղքով առաջացած խոտանքը, վորը հայտարերվել է չինված քը տեխնիկա-

կան վերահսկողության մարմինների կողմից ընդունելուց հետո, վարձատրվում է այդ աշխատողի պիտանի չինված-քների հետ հավասար չափով։

ԽՍՀՄ Աշխատողկոմ ՑԻԽՈՆ.

ԽՍՀՄ Աշխատողկոմատի կոլ. անդամ՝
ԲՐԱՆԴԵՆԲՈՒՐԳՍԿԻՑ։

1932 թ. ապրիլի 11.
(Հրատ. «ԽՍՀՄ Աշխատողկ. Տեղեկատու.» 1932 թ.)

ՀԱՎԵԼՎԱԾ № 5

ԽՍՀՄ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ ՑԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

Սեզոնային աշխատանքներում առաջացած պարապուրդի վարձավճարման մասին.

1930 թ. դեկտեմբերի 23-ին

ԽՍՀՄ Կենտրոնական գործադիր կոմիտեն և Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը վորոշում են՝.

ԽՍՀՄ Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի և Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի 1926. թ. հունիսի 4-ի, սեզոնային աշխատանքներում աշխատանքի պայմանների մասին՝ վորոշման (ԽՍՀՄ Ո. Ժ. 1926 թ. № 40 հոդ. 290) 15-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«15. Այն դեպքերում՝ յերբ վարձվողի կողմից աշխատանքը չի կատարվել կազմակերպչական-արտադրական պատճառներով (նյութերի, գործիքների մատակարարման խափանում, մեքենաների կանգ առնելը և այլն), աշխատավարձը պարապուրդի ժամանակամիջոցում վճարվում է.

ա). յեթե պարապուրդը տեվել է 12 որից վոչ ավել—տարիֆային դրույքով.

բ). յեթե պարապուրդը տեվել է 12 որից ավել ժամանակ—կողմերի համաձայնությամբ սահմանված չափով։

Այն դեպքում՝ յերբ աշխատանքը դադարեցված է անձրևի, կամ այլ մթնոլորտային յերևույթների պատճառով, աշխատավարձը պարապուրդի ժամանակամիջոցում վճարվում է կողմերի համաձայնությամբ՝ սահմանված չափով»։

ԽՍՀՄ Կենտգործկոմի նախագահ՝ Մ. ԿԱԼԻՆԻՆ.

ԽՍՀՄ Ժողկոմխորի նախագահի տեղակալ՝
Ա. ՌՈՒԶՈՒՏԱԿ

ԽՍՀՄ Կենտգործկոմի քարտուղար՝
Ա. ՑԵՆՈՒԿԻԶԵ.

(Հրատ. «ԽՍՀՄ Ող. Ժող.» 1930 թ. № 3, հոդ. 32)։

ՀԱՎԵԼՎԱԾ № 6

ԽՍՀՄ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

Մասնավոր ձեռնարկություններում և տնտեսություններում պրապուրդի և խոտանքի վարձավճարման մասին

Համաձայն ԽՍՀՄ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1931 թ. դեկտեմբերի 30-ի, արտադրության մեջ և տրանսպորտում պարապուրդի և խոտանքի վարձավճարումը կարգավորելու միջոցառումների մասին՝ վորոշման 7-րդ կետի (1932 թ. Ռ.Ժ. №2 հոդ. 11), ԽՍՀՄ Աշխժողկոմատը, համաձայնացնելով ՀԱՄԿԽ-ի հետ՝ վորոշում է՝

Մասնավոր (վորոնց թվում և կոնցեսսիոն) ձեռնարկություններում և տնտեսություններում կիրառվում են պարապուրդի և խոտանքի վարձավճարման հետևյալ կանոնները՝

1. Վոչ աշխատողի մեղքով առաջացած պարապուրդի ժամանակաշրջանի աշխատավարձը՝ վճարվում է՝

ա). յեթե պարապուրդը տևել է անընդհատ՝ յերեք որից վոչ ավել-միջին աշխատավարձով:

բ). յեթե պարապուրդը տևել է անընդհատ՝ յերեք որից ավել ժամանակ՝ տարիֆային դրույքով, հաշված պարապուրդը սկսելու մոմենտից.

2. Աշխատողի մեղքով առաջացած պարապուրդի դեպքում՝ աշխատավարձ չի վճարվում:

3. Պարապուրդի հետևանքով ազատված աշխատողները կարող են փոխադրվել իրենց վորակին

համապատասխանող ուրիշ աշխատանքի՝ մեկ ամսից վոչ ավել ժամկետով:

Այդ դեպքերում՝ փոխադրելու ամբողջ ժամանակի համար վարձատրումը կատարվում է-ըստ վարած աշխատանքի, բայց այդպիսին չի կարող պակաս լինել նախկին աշխատանքի փաստացի դատումից:

4. Խոտանքը, վորը առաջացել է աշխատողից անկախ պատճառներից և չեր կարող նրա կողմից ժամանակին վերացվել՝, վարձատրվում է պիտանի շինվածքների հետ հավասար չափով:

5. Աշխատողի մեղքով առաջացած խոտանքը չի վճարվում:

Աշխատողի մեղքով առաջացած մասնակի խոտանքը (յեթե պրոդուկցիան իր վորակով չի բավարարում սահմանված պահանջներին) վճարվում է իջեցված չափով: Այդ դեպքում՝ պրոդուկցիայի պիտանիության տոկոսը և վճարման չափը սահմանվում է վարչության կողմից, իսկ վեճի դեպքում՝ խնդիրը լուծվում է ԳԿՀ-ի կողմից:

6. Յեթե հաստատված է, վոր աշխատողը իր մեղքով փչացրել է վարձողի կողմից իրեն հանձնված նյութերը, այդ դեպքում՝ ժողովրդական դատարանի աշխատանքային նստաշրջանի վորոշմամբ՝ աշխատողը պարտավոր է վճարել հասցրած վնասը, սակայն իր ամսական տարիֆային դրույքի մեկ քառորդից վոչ ավել:

Նյութերի արժեքը վորոշվում է պետական մրթերման դների համաձայն:

Գումարները, վորոնք պիտի դանձվեն աշխատողից՝ աշխատանքային նստաշրջանի վորոշման համաձայն, կատարման թերթի հիման վրա, պահ-

վում են միայն աշխատավարձից (հետևելով դաշնակից հանրապետությունների քաղաքացիական դատավարական օրենսդրքերին)։ Պահումները արձակման նպատակից, արձակուրդի փոխահատուցումից և այլն փոխհատուցման գումարներից չի թույլատրվում։

7. Խոտանքը չվարձատրելու և նյութերը փչացնելու համար՝ պահումներ կատարելու, այս վորոշման մեջ մատնանշված՝ –բոլոր դեպքերում, աշխատողը պահպանում է աշխատավարձը՝ իր ամսական տարիֆային դրույքի յերկու յերրորդի չափով։

ԽՍՀՄ Աշխատանքի Ժողովրդական Կոմիսարի
տեղակալ՝ ԿՐԱՎԱԼ
ԽՍՀՄ Աշխժողկոմատի կոլլեգիայի անդամ՝
ԲՐԱՆԴԵՆԲՈՒՐԳՍԿԻՑ։

(Հրատ. «ԽՍՀՄ Աշխժողկ. Տեղեկ.» 1932 թ. № 5—6)։

ՀԱՎԵԼՎԱԾ № 7

ԽՍՀՄ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ № 97 ՎՈՐՈՇՈՒՄԸ

ԽՍՀՄ Աշխժողկոմատի 1932 թ. փետրվարի 25-ի, պարապուրդի և խոտանքի հատուցման կարգի մասին, № 31 վորոշման 8-րդ և 11-րդ. հոդ. հոդ. փոփոխելու մասին։

1932 թ. հունիսի 1-ին

Նպատակ ունենալով համաձայնացնել ԽՍՀՄ Աշխժողկոմատի 1932 թ. փետրվարի 25-ի, պարապուրդի և խոտանքի վարձավճարման կարգի մասին, № 31 վորոշումը, ԽՍՀՄ Աշխժողկոմատի 1932 թ.

հունիսի 1-ի, աշխատողներին ոգտագործելու համար տրված՝ ձեռնարկության կամ հիմնարկության պատկանող նյութերի, շինվածքների և դույլի համար աշխատողների դույլային պատասխանատվության մասին, № 96 հրահանգի հետ, ԽՍՀՄ աշխատանքի ժողովրդական կոմիսարիատը՝ վորոշում է՝

ԽՍՀՄ Աշխժողկոմատի 1932 թ. փետրվարի 25-ի, պարապուրդի և խոտանքի վարձավճարման կարգի մասին, № 31 վորոշման 8-րդ և 11-րդ կետ. կետ. շարադրել հետևյալ խմբագրությամբ՝–

«8. Շինվածքներ պատրաստելու ժամանակ՝ նյութերն փչացնելու համար, աշխատողը կրում է դույլային պատասխանատվություն՝–ա). դիտավորյալ կերպով փչացնելու դեպքում–հասցրած վնասի հնգապատիկ չափով, բ). անփութությամբ՝ փչացնելու դեպքում—հասցրած վնասի չափով, բայց իրեն մի ջին ամսական դատումի յերկու յերրորդից վոչ ավել։

Այն գումարները, վորոնք պետք է գանձվեն աշխատողից նյութերն փչացնելու համար, նրանից պահվում է անմիջապես վարչության կարգադրությամբ նրա աշխատավարձից—ձեռնարկությունից կամ հիմնարկից նրան հասանելիք ամեն տեսակի գումարներից։ Վերոհիշյալ պահումների կամ նրա չափի դեմ աշխատողը կարող է գանգատ ներկայացնել ԳԿՀ-ին։

Վճարման յուրաքանչյուր դեպքում՝ պահումը չի կարող գերազանցել աշխատողին հասանելիք բոլոր գումարների 25 %-ից։ Եթե աշխատողի աշխատավարձից կատարվում են նաև ուրիշ պահումներ՝, այդ դեպքում, բոլոր տեսակի պահումների ընդհա-

նուր չափը չի կարող ամբողջ հասանելիք գումարի 50%-ից ավելի լինել։

Պահումը կատարվում է ամեն մի վճարման դեպքում, մինչև պարտքի լիակատար մարումը։ Եթե աշխատողի արձակման դեպքում՝ մատնանշված չափերով կատարվող պահումները չեն ծածկում նրա ամբողջ պարտքը, այդ դեպքում, մնացած մասը վարչության կողմից դանձվում է պարզեցրած կարգով, համաձայն դաշնակից հանրապետությունների օրենսդրության։

11. Վարչությունը պարտավոր է ձեռք առնել բոլոր անհրաժեշտ միջոցները պարապուրդը և խոտանքը վերացնելու համար, իսկ պարապուրդի անխուսափելի լինելու դեպքում—ոգտագործել ազատված աշխատողներին ուրիշ աշխատանքներում։

Այդ պարտավորությունները չկատարելու դեպքում՝ վարչությունը յենթարկվում է կարգապահական կամ քրեական պատասխանատվության։ Բացի այդ, ձեռնարկության հասցրած վնասի համար, վարչությունը յենթարկվում է գույքային պատասխանատվության, համաձայն ԽՍՀՄ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1929 թ. հունիսի 12-ի վորոշման (ԽՍՀՄ Որենքն. Ժողով.» 1929 թ., № 42 հոդ. 367 1931 թ., № 51, հոդ. 334։ «ԽՍՀՄ Աշխժողկոմատի տեղեկատու» 1929 թ., № 28-29. 1931 թ. № 28 և ԽՍՀՄ Աշխժողկոմատի 1932 թ. հունիսի 1-ի, № 96 հրահանգ)։

ԽՍՀՄ Աշխժոկոմի տեղակալ՝ ԿՐԱՎԱԼ

ԽՍՀՄ Աշխժողկոմատի Կոլեգիայի անդամ՝

ԲՐԱՆԴԵՆԲՈՒՐԳԱԿԻՑ

Համաձայնեցված է ՀԱՄԿԽ-ի հետ՝ ՑԻԲՈՒԼԱԿԻՑ

ԳԻՆԸ 50 ԿՈՊ.

30

ՀՍԽՀ ԱՇԽԱՏՈՂԿՈՄԱՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՄԲ 1932 Թ. ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

1. Հիմարկ-Հեռնարկությունների պարտադիր դրույքների սխեմա-նկարը . . . . . Գինը—1 ռ. — կ.
2. «ՀՍԽՀ Աշխարհնոգբության Տեղեկատու» № 1—6 (հունվար—հունիս) . . . . . » —1 » — »
3. «Նոր օրենք հերթական և լրացուցիչ արձակուրդների մասին» » —1 » — »
4. «ՀՍԽՀ Աշխարհնոգբության Տեղեկատու» № 7—9 (հուլիս—սեպտեմբեր) . . . . . » —1 » — »
5. «Պարապուրդի և խոտանքի վարձավճարում» . . . . » — » 50 »

1933 Թ. ՍԿԶԲՆԵՐԻՆ ԼՈՒՅՍ Ե ՏԵՍՆԵԼՈՒ

6. «ՀՍԽՀ Աշխարհնոգբության Տեղեկատու» № 10—12

ԴԻՄԵԼ

ՑԵՐԵՎԱՆՈՒՄ — ՀՍԽՀ Աշխատողկոմատի Հրատարակչական մասին կամ նրա հարակային կիոսկին (Կառավարական տուն, Ինֆինու փողոցից, յերկրորդ հարկ):

ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ — Աշխատանքի իրավական տեղեկատուներին:

ՀՀ Ազգային գրադարան
NL0296221

25. 391